

-Հապա դո՞ւն ինչու չես խնդար, Արկադեան սոխակ: Երեսդ միշտ կախ է:

-Ժամանակ մը կը խնդայինք, երբ դեռ երկրի վրայ մարդը ստեղծուած չէր:

-Մարդուն՝ երկրի վրայէն հեռանալուն կը սպասե՞ս՝ վերստին խնդալու համար:

Էշը գռաց ու ըսաւ.

-Վերջին խնդացողը լաւ պիտի խնդայ:

Գնչու մը կ'անցներ՝ մէկ կողմէն քաշելով կապիկ մը ու միւս կողմէն քշելով խոզ մը:

Կանգնեցուցի Գնչուն, դրամ դրի ափին մէջ, որ թոյլ տայ հարցափորձել իր կենդանիները:

Կապիկին ըսի.

-Ի՞նչու չես խնդար...

-Կը հեգնեմ, սակայն, չեմ խնդար:

-Տե՛ս, մարդը կը խնդայ, մինչդեռ դուն, որ մարդուն նախահայրն ես, զրկուած ես այս սիրուն սովորութենէն:

-Այնուամենայնիւ, մարդուն ամբողջ ըրածը կապկութիւն է:

-Ըսէ, սակայն, թէ ինչու չես խնդար:

-Գիտես, որ մարդը սերած է մենէ՝ կապիկներէ: Արդ, երբ հայր մը կամ մայր մը կը տեսնէ, որ հրէշային զաւկի մը ծնունդ տուած է, ալ ինչպէս խնդալու տրամադրութիւն կը մնայ մէջը...

Ծռեցայ խոզին ու ըսի.

-Պարոն խոզ, հապա դուն ի՞նչու չես խնդար:

-Իմ պարագաս կապիկին պարագայէն ծանր է:

-Ըսէ, խնդրեմ, քու պարագադ:

-Երբ կապիկը չի խնդար «մարդ» կոչուած *ճանապարհ*ին ծնունդ տուած ըլլալուն համար, ես ինչպէս կրնամ խնդալ՝ տեսնելով, որ մարդը, կապիկութենէ հեռացած, կը մօտենայ խոզութեանս: Վտանգը կապիկէն հեռացած է ու մօտեցած ինծի:

-Ուրեմն դուք մարդկութեան ոչնչացումի՞ն կը սպասեք՝ խնդալու համար: